Լ. ՄԵԼԻՔՍԵԹ-ԲԵԿ

ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՐԵՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ

Վրացական ՍՍՌ Պետական Թանգարանի հայերեն ձեռագրերի հավաքածվի մեջ, վոր վաղուց ցուցակագրված է մեր կողմից, ի միջի այլոց, առանձին ուշադրություն է գրավում մի ժողովածու՝ № 21-ի ներքո։ Ժողովածուն, վոր «Գիրք թղթոց»-ի, «Կնիք հաւատոյ»-ի և «Կանոնագրքի» մի տեսակ կոնտամինացիա յե, գրված 765 = 1316 թվին վոմն Ներսես քահանայի ձեռքով և վոմն Մովսիսի աշխատակցությամբ, պարունակում է 45-ի չափ մեծ և փոքր հոդվածներ այլ և այլ բովանդակությամբ, վորոնց թվում մի քանիսը կարևոր նշանակություն ունեն հայագիտության այս կամ այն խնդիրը լուսաբանելու համար, իսկ մի յերկուսն ել «Գիրք թղթոց»-ի թերի կամ յեղծված տեղերի խպառ վերականգնման հնարավորությունն են տալիս (որինակ՝ «Բացայայտութիւն... ասացեալ սրբոյ վարդապետին Սահակայ կաթողիկոսի և մեծի թարգմանչի՝ ընդդէմ երկաբնակացն նեստորականացն» և «Բանք խրատանք վասն հաւատոյ» ընդարձակ գրություններին)։

Նույն ժողովածվի մեջ, վորի վերաբերյալ մեր մանրամասն ուսումնասիրությունը կապվի առանձին[1], աչքի յե ընկնում նաև մի գրություն՝ «Վասն ասպարիզաց»՝ վերնագրով՝ չափագիտության հարցի շուրջը, թեև գրության վերնագիրը չի համապատասխանում բովանդակության։ Գրությունը ձեռագրում բռնում է 84v—87r եջերը և տարբերվում է հայերեն լեզվով գոյություն ունեցող և ցարդ հրապարակված համապատասխան վավերագրերից, որինակ՝ Հարությունի Վ. Ավգերյանի *(Բացատրութիւն չափուց և կշռոց նախնեաց առաջնորդութեամբ Եպիփանի, Խորենացւոյ և Շիրակացւոյ, Վենետիկ, 1821),* ***Hans von Mžik***-ի (Erdmessung, Grad, Meile und Stadion nach den altarmenischen Quellen. Ein Beitrag zur Geschichte der Erdkunde und der Kulturbeziehungen Zwischen Hellenismus und Armeniertum— *«Հանդէս ամսօրեայ», 1933 թ., եջ 283—306, 432—459, 559—588)* և *ակադ.* Հակոբ Մանանդյանի *(Երատոսթենեսի ստադիոնը և պարսից ասպարեզը, Յերևան, 1934)* հրատարակածներից։

Վորպեսզի այս նորագյուտ աղբյուրը մատչելի դարձնենք մասնագետներին, հրատարակում ենք նույնությամբ ըստ հիշյալ ձեռագրի, սկզբնական

---

[1] *Տես մեր համապատասխան զեկուցումը «Հայկական «Գիրք թղթոց»-ի նոր վարիանտը և Պետրոս Վերիացու աշակերտ Հովհան Մայումեցին», կարդացած Թբիլիսիի՝ Ստալինի անվան Պետական համալսարանի 2-րդ գիտական սեսսիայում, 1940 թ. մայիսի 8-ին (Թեզիսները, վրացերեն, եջ 119—121)։*

մասում ընդգծելով այն տեղերը, վորոնք շփվում են Hans von Mzik-ի *հրատարակած տեքստին։*

84 v

ՎԱՄՆ ԱՍՊԱՐԻԶԱՑ

Քաջ երկրաչափք և ներհունք աշխարհագրութեան այսպէս ասացին. մասն ՀԱ մղոն է և Շ ասպարէզ ի լայնն և ի յերկայնն
85 r չորեք || կուսի միաչափ։ Եւ խարիսխն երեք մղոն։ Եւ մղոն եւթն ասպարէզ։ Եւ ասպարէզն ՃԷ քայլ ըստ աւդաչափութեան։ Եւ ըստ Պարսից ՃԽԳ քայլ։ Եւ լինի ըստ այսմ մղոնն հազար քայլ։ Եւ քայլն վեց ոտն։ Եւ ոտն ԺԶ մատն։ Ասի մղոնն ստադիոն և վտաւան։ *Իսկ քանքարն և տաղանդն ի սոցին գիտակաց ասացաւ. ՃԻ և Ե լիտր և կամ Ը դահեկան. և ոմանք զմասն և զմոնադն նոյնպէս ասացին ըստ տաղանդին։*

Եւ զլիտրն ինն հազար ասարիոն, որ է դանկ, և ըստ
85 v *ոմանց | նուազութիւն։ Եւ կենդինարն Ճ լիտր և ըստ ոմանց եւթն հազար և երկերիւր դահեկան։ Եւ լիտրն երկոտասան ուկի և ուկին վեց դահեկանի կշռորդ։*

Եւ դահեկանն դրամ մի և երրորդ մասն դրամին։ Եւ դրամն վեց դանդ, որ է ԺԸ կուտ՝ կորիզ՝ կերատ, մի են սոքա։ Եւ դանդն՝ երեք կուտ եղջիւրոյ, որ է երեք գարւոյ կշռորդ մի կուտն։ Եւ լինի լիտրն ՀԲ դահեկան. և դրամով կշռեալ ութսուն
86 r *դրամ։ Իսկ ունկին Բ սատեր է, || որ է Ը դրամ կամ վեց, զի պակաս է ունկին քան զուկին, որպէս ցուցաւ ասի և ըստ ոմանց դահեկանն վաթսուն ասարիոն, բայց արծաթին։*

Դրաքմէն և սիկղ Բ դրամ և սրբութեան սիկղն Դ դրամ և Բ դանդ։

Սատերն և դրաքմայն Դ դրամի կշռորդ է. Ադիրոնն և դինարն՝ դահեկանի անուն է։ Սիմէս՝ կէս դահեկան է, և տրմէս՝ երրորդ մասն դահեկանի։ Քըսէստն՝ չափ է՝ ըստ ոմանց Բ լիտր և ըստ
86 v *այլոց Ի ունկի։ Մարն՝ Ծ | քսէստ, որ է չափ հնձանի։ Քոռն՝ երեսուն մոդ և արդուն՝ չորս մասն մոդոյն, որ է եւթանասուն և երկու քսէստ, և ըստ ոմանց ԺԵ մոդ։ Երեք գրիւն՝ մի մոդ, որ է չափ սրբութեան, և ըստ ոմանց երեք չափ։ Եւ այլ դարձեալ կապիճն տասներորդ մասն է, ասեն գրուին և կշիռ ըստ գրուին կապիճն և ըստ արգուին է։ Իսկ քոռն յոլով, քան զսոսա*
87 v *է։ Եւ ոմանք զարդուն չափ ասացին և զգրիւն կապիճ || կամ փսակ այրւոյն չորս քսէստ էր, որպէս սափոր մանանային։ Բայց գիտել պարտ է, զի յայլ և յայլ տեղիս տարբերք լինին չափք և կշիռք։*

Л. Меликсет-Бек

ИЗ АРМЯНСКИХ ИСТОЧНИКОВ ПО МЕТРОЛОГИИ

(Резюме)

Скудная литература, содержащая в себе армянские письменные источники по метрологии, обогащается небольшим трактатом под заглавием „Об аспарезе“, публикуемом здесь впервые по рукописи № 21, от 1316 г., из собрания армянских рукописей (Arm.) Госуд. Музея Грузинской ССР, представляющей собою в некотором роде контаминацию сборников, известных под названием „Книга посланий“, „Печать веры“ и „Книга канонов“.